Ինչպես Ուղղել Ձեր Սոցիալական Ապահովության Հասույթի Տեղեկությունը

Եթե դուք առնվազն 25 տարեկան եք, աշխատում եւ վճարում եք Սոցիալական Ապահովության հարկեր, ուրեմն յուրաքանչյուր տարի դուք պետք է ստանաք *Social Security Statement* («*Սոցիալական Ապահովության Հաշուեցույց*»ը) ձեր ծննդյան օրից մոտաւորապէս 3 ամիս առաջ: Դուք պետք է ուշադիր ստուգեք այդ *Հաշուեցույցը*, որպեսզի վստահ լինեք, որ ձեր անունը, ծննդյան թվականը եւ ձեր վաստակած գումարը ճշգրիտ են: Երբեմն պակաս է լինում ձեր աշխատանքի հասույթը:

Ի՞նչու կարեւոր է իմ հասույթի հաշուեցույցի ճշգրտությունը

Ձեր հաշուեցույցի մեջ նշված հասույթը որոշում է Սոցիալական Ապահովության նպաստի գումարը, որը դուք եւ ձեր ընտանիքը կարող եք ստանալ: Եթե ձեր բոլոր հասույթը նշված չէ ձեր հաշուեցույցի մեջ, ապագայում դուք եւ ձեր ընտանիքը կստանաք Սոցիալական Ապահովության նուազ նպաստներ:

Ի՞նչպես կարող է իմ հասույթը բացակայել իմ հաշուեցույցից

Եթե բացակայ հասույթը այս տարվա կամ անցյալ տարվա պատկանում է, չմտահոգվեք: Որովհետեւ այդ հասույթը նոր է ստացվել, հնարավոր է որ մենք դեռ չենք արձանագրել այն: Դա կհայտնվի յաջորդ *Հաշուեցույցի* մեջ:

Հետեւյալ պատճառներով կարելի է որ նախորդ տարիներու հասույթը բացակայ լինի.

- Ձեր գործատէրը ներկայացուցած է ձեր հասույթը՝ օգտագործելով սխալ անուն, ազգանուն կամ Սոցիալական Ապահովության համար:
- Ձեր գործատէրը սխալ հասույթ ներկայացուցած է ձեզ համար:
- Դուք ամուսնանալուց կամ բաժանվելուց փոխել եք ձեր անունը կամ ազգանունը, բայց Սոցիալական Ապահովության տեղյակ չեք պահել:
- Դուք աշխատել եք ձեզ չպատկանող Սոցիալական Ապահովության համարով:

Ի՞նչ պետք է անեմ, եթե իմ հասույթը բացակայում է իմ հաշուեցույցից

Երբ դուք տեսնում եք որ ձեր հասույթը բացակայում է ձեր հաշուեցույցից, անմիջապէս պետք է ապացույց գտնեք այդ հասույթի վերաբերյալ: Այդ ապացույցը կարող է լինի.

- Ձեր W-2 թղթիկը (*Wage and Tax Statement—Աշխատավարձի եւ Հարկերի Հաշուեցույց*).
- Հարկային հայտարարագիր.
- Աշխատավարձի կտրոն կամ վճարման ստացական.
- Աշխատավարձի ձեր անձնական հաշուեցույցը. կամ
- Մեկ այլ գրավոր փաստաթուղթ, որը ցույց է տալիս որ դուք աշխատել եք:

Եթե չեք կարող գտնել որեւէ գրավոր փաստաթուղթ որը ցույց է տալիս ձեր հասույթը, հիշեցեք եւ գրեցեք հետեւյալ տեղեկությունները.

- Աշխատանքի վայրը.
- Գործատիրոջ անունը.
- Աշխատանքի թվականը.
- Վաստակած գումարը. ինչպես նաեւ
- Այն անունը, ազգանունը եւ Սոցիալական Ապահովության համարը, որն օգտագործել եք աշխատելու ընթացքում:

Ի՞նչպես կարող է Սոցիալական Ապահովությունը օգնել ինձ

Ձեր փաստաթղթերը եւ տեղեկությունները հավաքելուց հետո, կապվեք Սոցիալական Ապահովության հետ: Մենք կաշխատենք ձեզ հետ, որպեսզի ուղղենք ձեր հաշուեցույցը: Այս ճշդումը պահանջում է որոշ ժամանակ՝ կախյալ այն տեղեկությունից, որը դուք ներկայացնում եք բացակայող հասույթի վերաբերյալ: Մենք կարիք կունենանք կապվելու ձեր գործատիրոջ հետ կամ էլ կառաջարկենք ձեզնից որ դուք դիմեք նրան:

Ի՞նչ անեմ, եթե չեմ ստացել *Հաշուեցույցը*

Եթե դուք չեք ստացել *«Սոցիալական Ապահովության Հաշուեցույց»ը*, կարող եք այն խնդրել մեր կայքէջի միջոցով ***www.socialsecurity.gov*** կամ մեզ հետ կապ հաստատելով:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՚կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10081-AM
How To Correct Your Social Security Earnings Record (Armenian)
April 2004